



Նկար 9.— ԿՈՐԻԿՈՍ Ե ԱՎԱՀԱՆԳՆ

Հ. Խ. ԽԱՎՓԱՆՉՅԱՆ

ԿԻԼԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ


Կիլիկիայի հայկական թագավորության ճարտարապետությունը Հայաստանի ճարտարապետության անխղելի մասն է, քանի որ կիլիկյան հայերը պահպանել ու շարունակել են զարգացնել բուն Հայաստանի ժողովրդական վարպետների շինարարական ավանդությունները:

Կիլիկիան, Միջերկրական ծովի արևելյան մասի փոքր-ասիական ափին գտնվող այդ փոքրիկ երկիրը, Հայաստանի հետ կապված է եղել հնագույն ժամանակներից: Դեռ մեր թվականությունից առաջ առաջին դարում այն եղել է Տիգրան Մեծի կայսրության կազմի մեջ, և հավանորեն հենց այդ ժամանակ էլ հայերն առաջին անգամ զանգվածորեն բնակություն են հաստատել այնտեղ: Դրանից հետո էլ չի դադարել հայերի գաղթը Կիլիկիա: Բայց այդ գաղթն ուժեղացել է է—Ք դարերում, երբ Հայաստանը ենթարկվում էր արաբական խալիֆաթին և մանավանդ ժԱ դարում, երբ բուն հայկական հողերը գրավեցին նախ Բյուզանդիան, ապա՝ սել-

ջուկները: ԺԱ դարում Կիլիկիայում սկիզբ են առել հայկական անկախ իշխանություններ: Դրանցից ամենամեծը եղել է Փիլարտոս Վարաժնունու իշխանությունը, բայց առավել կենսունակ եղել է Անիի Բագրատունիների սերունդ Ռուբենի իշխանությունը, որ հիմնվել էր 1080 թվականին Կիլիկիայի լեռնային շրջաններում¹: Ասիայի և Եվրոպայի երկրների միջև ընկած այս իշխանությունը բաղաբազան ու տնտեսական մեծ նշանակություն ուներ, և այդ Լևոն Բ Ռուբինյանին (1187—1219 թ. թ.), հիմք տվեց 1198 թվականին վերափոխելու այն թագավորության, որը միջնադարյան լատինական տարեգիրները կոչում էին Փոքր Հայաստան կամ պարզապես Հայաստան (Armenia minor, Armenia, Ermenia):

1226 թվականին Ռուբինյաններին փոխարինեցին Հեթումյանները: ԺԲ դարի 50-

¹ Սրա մասին մանրամասն տե՛ս Գ. Գ. Միքայելյան, «Կիլիկյան հայկական պետության պատմությունը», Երևան, 1952, էջ 70—88 (առանձին):



Ր Ե Գ Զ Ա Ն Ո Ւ Ր Տ Ն Ս Ք Ը


ական թվականներին մոնղոլները նվաճեցին Առաջավոր Ասիան, և այդ Հեթում Ա-ին ստիպեց դաշինք կնքել նրանց հետ ու մասնակցել եգիպտական մամլուքների դեմ մղվող պատերազմին, որը 1266 թվականին ավարտվեց Կիլիկյան Հայաստանի պարտությամբ: Այնուհետև սկսվեց Հեթումյանների պայքարը իրենց ենթակա իշխանների անջատողական շարժումների դեմ: Հետագայում կրոնական վեճերը և մամլուքների պարբերական ավերիչ ներխուժումները հարված հասցրին երկրի տնտեսական բարեկեցության և խախտեցին նրա հողային ամբողջականությունը: 1342 թվականին թագավորական իշխանությունն անցավ Կիպրոսի Լուսինյանների ներկայացուցիչներին, որի հետևանքով կրոնական տարածայնությունների հողի վրա սրվեց պայքարը հայ իշխանների միջև և մյուս կողմից ավելի հաճախակի դարձան մամլուքների ասպատակությունները, որոնք, ի վերջո, 1375 թվականին հասցրին Կիլիկիայի հայկական թագավորության անկման:

Կիլիկիայի հայկական պետությունն իր ամենածաղկած ժամանակաշրջանում ուներ մոտ 30 շրջան և շուրջ 1 000 000 բնակչություն: Շրջանների կենտրոններն էին քաղաքները, ամրոցներն ու իշխանների դղյակները, որոնց թիվը երկրի լեռնային մասում հարյուրից ավելի էր: Պետության մայրաքաղաքները հաջորդաբար եղել են՝ Վահկա ամրոցը (1080—1095 թ. թ.), Անաղարբա քաղաքը (1095 թվականից ժՔ դարի 70-ական թվականները) և Սիսը (ժՔ դարի 70-ական թվականներից մինչև 1375 թվականը):

Կիլիկիայի հայկական պետության քաղաքական կառուցվածքն ստեղծվել էր հայկական ֆեոդալական պետության ավանդությունների և տեղական առանձնահատկությունների հիման վրա, որոնք պայմանավորված էին բյուզանդացիների և խաչակիրների հետ ունեցած շփումով: Նրանց ազդեցությունն ամենից ավելի թափանցել էր թագավորի արքունիքը և բարձր ազնվականության կենցաղի մեջ:

Կիլիկիան գտնվում էր Արևմուտքի և Արևելքի ծովային և ցամաքային առևտրական ճանապարհների հանդիպման կետի վրա, մասնակցում էր միջազգային առևտրին, և դա բարենպաստ ազդեցություն էր ունենում երկրի տնտեսական արագ վերելքի, քաղաքային կյանքի ու քաղաքների շինարարության վրա: Հարավ-արևելյան Եվրոպայի քաղաքների (Ջենովա, Վենետիկ), Արիմի, հարավ-ուստական տափաստանների և Առաջավոր Ասիայի քաղաքների հետ կապված արհեստավորական արտադրության ու արտաքին առևտրի զլխավոր կենտրոններն էին Տարսոն քաղաքը, Ադանան, Մոսիսը, Այաս ու Կորիկոս նավահանգիստները:

Քաղաքական անկախության պայմաններում գիտությունն ու մշակույթի զարգացման համար բնորոշ էր աշխարհիկ ուղղությունը: Խոշոր նշանակություն ուներ շփումը արևմուտա-եվրոպական երկրների հետ: Դպրոցական ցանցը լայնորեն զարգացած էր: Առանձնապես մեծ հռչակ ունեին վարդապետարանները՝ վանքերին կից բարձրագույն դպրոցները: Խոշոր քաղաքներում կային նաև դուս աշխարհիկ դպրոցներ, որոնք



Նկար 1.— ՀԱՅՏԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՐԻՎՈՍԻ ԾՈՎԱՅԻՆ ԲԵՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՇՏԱՐԱԿԻ ԴՌԱՆ ԳԼԽԻՆ

հիմնել էր պետությունը, մասնավորապես Լևոն Բ-ը: Զարգացման բարձր աստիճանի էին հասել հումանիտար ու ճշգրիտ գիտությունները, պատմական ու օրենսդրական աշխատությունները, գեղարվեստական գրականությունը, գրքի մանրանկարչությունը, որը սերտորեն կապված էր բուն Հայաստանի մանրանկարչության հետ, բայց ձևակերպվել էր որպես առանձին դպրոց և հայտնի էր Կիլիկյան դպրոց անունով³: Կիլիկյան մանրանկարները հիացմունք են պատճառում վառ գույներով, ոսկու բազմազանությունը ու ձևերի հարստությամբ: Մանրանկարների բնորոշ առանձնահատկությունն է մարդու մարմնի և կենդանիների ու բույսերի ծավալային մեկնաբանությունը, կառուցվածքների և ամենաբարդ զարդանկարների տարածայնությունը: Որոշ մանրանկարներում նշանակալից տեղ է պատկանում ճարտարապետությունը:

Քանդակագործությունը կրում էր կիրառական բնույթ: Տարածված էին խորաքանդակները, բուսական-երկրաչափական բովանդակությամբ զարդաքանդակները: Մեծ արժեք են ներկայացնում Լևոն Բ թագավորի խորաքանդակները Անազարբայի ամրոցում (միջանցքի պատին) և Լևոնկլայում կամ Օձիբերդում (գլխավոր մուտքի ճակատին):

2. Ա. Ի. Սվիրիև, «Է՛ին Հայաստանի մանրանկարչությունը», Մոսկվա—Լենինգրադ, 1939, էջ 49—81 (ռուսերեն)։— Լ. Ա. Գառեռվա, «Է՛ին հայկական գեղանկարչության համառոտ պատմությունը», Երևան, 1957, էջ 26—27, 34—42 (ռուսերեն)։

Դեկորատիվ նշանակություն էր տրվում շենքերի պատերին արված մակագրություններին, որ փորագրվում էին ճարտարապետական դետալների վրա (Սելեկիայի ամրոցի մուտքի պորդալին), պատերի մակերեսին (Թորոս Ա իշխանի (1110—1129 թ. թ.) մակագրությունը Անազարբայի Զորավարանց եկեղեցու պատին) և երբեմն զետեղվում էին զեղարվեստորեն ձևավորված շրջանակներում (Կորիկոսի ծովային ամրոցի) (նկար 1), Անազարբայի, Սելեկիայի ամրոցների աշտարակների մակագրությունները³:

Կիլիկյան Հայաստանի ճարտարապետությունը, որ կապված էր բուն Հայաստանի ճարտարապետության հետ, միաժամանակ ունի նաև իր առանձնահատկությունները, որոնք արդյունք են տեղական պայմանների և սահմանակից երկրների ազդեցության: Դա անդրադարձել է գլխավորապես շենքերի դեկորատիվ զարդարանքների վրա:

Պաշտպանական և մոնումենտալ կառուցումների համար հիմնական շինանյութ է եղել բնական քարը (ավազաքար, կրաքար, գրանիտ), զարդարումների համար օգտագործել են խառնանյութ, սպիտակ ու սև մարմար. մարմարը հաճախ վերցնում էին հին հռոմեական ու բյուզանդական շենքերի ավերակներից: Փայտանյութերից կիրառում էին կաղնի, մայրի, ձիթենի:


Պաշտպանական կառուցվածքների պատերը շարվում էին կոպիտ մշակված խոշոր



Նկար 2.— ԱՆԱԶԱՐԲԱ ԲԵՐԴԻ ԱՇՏԱՐԱԿՆԵՐԸ

3 Վ. Լանգլուա, «Կիլիկիայի հունական, հռոմեական, բյուզանդական և հայկական արձանագրությունները», Փարիզ, 1854, էջ 14, 16, 53 (ֆրանսերեն)։— Ի. Քայլ և Ա. Վիլնիլ, «Երաժանատես Կիլիկիայի հուշարձանները. «Փոքր Ասիայի անտիկ հուշարձանները», հատոր 3, Մանչեստր, 1931, էջ 4 (գերմաներեն)։

քարերով և որպես շաղախանյութ օգտագործում էին կիրը (եկար 2): Կիրառվում էին նաև սրբատաշ քարեր: Մոնումենտալ շենքերի պատերի երեսի կողմը շարվում էր սրբատաշ քարերով, որոնք հաճախ խոշոր շափերի էին լինում, իսկ միջին տարածությունը լցվում էր մանր քարերով: Ամենակարևոր տեղերում քարերը միակցվում էին մետաղյա կապերով, հալված կապարով (Սիս քաղաքի Ս. Սոֆիա եկեղեցու գմբեթասյունները):



Նկար 4.— ԳՈՒԳՆԱԿ ԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻՄԸ

Բացվածքները վերջավորվում էին կիսաշրջանաձև, սլաքաձև և աղեղնաձև կամարներով: Ծածկերը սովորաբար լինում էին կամարակապ: Գմբեթների ծածկերում կիրառվում էր հատակագծի քառակուսի ձևից գմբեթաթմբուկին անցնելու առաջատակամարային կառուցվածքը: Ամրոցներ ու բերդեր կառուցելիս հաճախ ժայռերի մեջ զանազան սենյակներ էին փորում: Պատերի ներսի մակերեսը զարդարում էին մարմարով ու խճանկարներով:

Շինարարական աշխատանքները կատարում էին վարպետ որմնադիրները: Շենքերի քարերի վրա նրանք թողնում էին իրենց տարբերանշանները. այդպիսի տարբերանշաններ, որպես հայկական տառեր, պահպանվել են Լամբրոնի ամրոցի, Տարսոնի Ս. Պետրոս և Ս. Սոֆիա եկեղեցու (նեղակալիս Ուլաջամի մզկիթը) պատերին⁴:


Մասնաշական շինարարության մեջ տարածված էր կոտորված քարերի և հում աղուսի շարվածքը կավաշաղախով: Բացվածքների կապերը լինում էին փայտե գերաններ,

հաղվաղեպ՝ կամարակապ: Ծածկերը լինում էին տափակ, կավահարդային:

Տնտեսական վերելքը նպաստում էր բնակավայրերի, մանավանդ առևտրական քաղաքների արագ աճմանը: Դրա հետ միասին հաճախակի պատերազմները ստիպում էին հատուկ ուշադրություն դարձնել բնակավայրերի պաշտպանունակության վրա: Այս կապակցությամբ շենքերի առաջատար տիպերը դարձան ամրոցներն ու բերդերը, որոնք տարածված էին երկրի լեռնային մասում: Ռազմագիտական կարևոր նշանակություն ունեցող խոշոր բերդերի մատուցները պաշտպանում էր մանր ամրոցների մի սխեման, որոնք ոչ միայն տեղեկություն էին հաղորդում վտանգի մասին, այլև իրենց վրա էին վերցնում թշնամու առաջին հարվածը: Պաշտպանության այդպիսի սխեման ունեին Սիս և Անաղարբա թագավորական բերդերը, Օշինյան (Հեթումյան) իշխանների Լամբրոն ամրոցը⁵:

Մանր ամրոցներն իրարից այնպիսի հեռավորության վրա էին գտնվում, որ կարելի լինի անգին աչքով տեսնել նրանցից տրվող ազդանշանները (լույսով կամ դրոշակներով): Սովորաբար ազդանշանները տրվում էին ամրոցի այնպիսի մի բարձր կետից, որ թշնամին չտեսնի: Լամբրոնի բերդում լույսի ազդանշաններ տրվում էին նաև նրա աշտարակների միջև, որի համար կային մանրիկ կլոր անցքեր, որոնց միջից տրվող լույսի ազդանշանները երևում էին միայն բերդի մյուս աշտարակներին⁶:

Ամրոցներն ու բերդերը կառուցվում էին զառիթափ լանջեր ունեցող դժվարամատչե-



Նկար 3.— ՄՈՒԿ ԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻՄԸ

4 Վ. Լանգլուա, «Ժամանակագրություն Կիլիկիայում և Տավրոսյան լեռներում», Փարիզ, 1861, էջ 360 (Քրանսերեն):— Վ. Լանգլուա, «Կիլիկիայի Տարսոնը և մի երեկո Յինդ գետի ափին», Քեղոզսիա, 1860, XII, էջ 196 (ռուսերեն):

5 Ղ. Ալիշան, «Սիսուն», Վենետիկ, 1885, էջ 96:— «Կիլիկիա», Պետերբուրգ, 1894, էջ 160:

6 Վ. Լանգլուա, «Ժամանակագրություն Կիլիկիայում...», էջ 360:

լի վայրերում (Թումուբերդ ամրոցը): Հատակագծի ձևը սովորաբար լինում էր անկանոն՝ կախված տեղանքից, և նկատի էր առնվում ռելիեֆի առանձնահատկությունների ուղղաձիգության առավելագույն օգտագործումը: Այդպես են Սսի բերդը, Ճանճի բերդը, Կանաչի բերդը, Լեռնկլան: Մուղ բերդը լեռան գագաթի ձև ունի, դեպի ուր խիստ դժվարանցանելի ճանապարհ կա միայն հարավային կողմից (նկար 3): Սակավ դեպքերում միայն բերդի հատակագծին այս կամ այն երկրաչափական ձևն էր տրվում, օրինակ՝ սեղանաձև (Գուգլակ, նկար 4): Սո-

ռուցելու գաղտնի անցքեր և տնտեսական սենյակներ: Աշտարակները սովորաբար կառուցվում էին զլանաձև, մեծ տրամագծով և ունենում էին ներքին սենյակներ: Կառուցվում էին նաև ավելի փոքր տրամագծի կիսակլոր, հոծ զանգվածով աշտարակներ, որոնք ավելի էին ամրացնում պարիսպները: Աշտարակների հեռավորությունն իրարից տարբեր էր: Հազվադեպ միայն կառուցվում էին ուղղանկյուն և քառակուսի աշտարակներ, որոնք բնորոշ էին բյուզանդական ժամանակների շինարարությանը: Սովորաբար այդպիսի ձև տրվում էր ամրո-



Նկար 5.— ԼԵՎՈՆԿԼԱՑԻ (ՕՁԻԲԵՐԴԻ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՅՈՒՐԸ

վորաբար դա բխում էր բնական պայմաններից և ոչ թե որևէ նախորդ տրադիցիայից, որովհետև ավելի վաղ ժամանակների բյուզանդական բերդերը (Մարաշ⁷) սովորաբար ունենում էին կանոնավոր հատակագիծ և ուղղանկյուն աշտարակներ, որոնք բնորոշ են հարթավայրերի պայմանների համար:

Բերդի տերիտորիան սովորաբար բաժանվում էր առանձին մասերի, որոնք գտնվում էին տարբեր բարձրությունների վրա և շքրափակված էին լինում ներքին պարիսպներով (Սիս, Մուղ): Արտաքին պարագիծն ամբացվում էր հզոր պարիսպներով ու աշտարակներով: Պարիսպների հաստությունը (Անամուրի պարիսպը մոտ 6 մետր) հնարավորություն էր տալիս նրանց մեջ կա-

ցի տիրոջ կամ պետի բնակելի աշտարակին: Այդ աշտարակի տեղը միշտ միևնույնը չէր լինում. մի դեպքում այն գտնվում էր նվազ վտանգավոր վայրում (Սիս, Լեռնկլա, Մուղ), մի այլ դեպքում՝ առավել խոցելի վայրում (Այաս, Կորիկոս, Լամբրոն): Գլանաձև աշտարակին զերադասություն տալը պայմանավորված էր ոչ միայն սելամիկ նկատառումներով, այլև նրանով, որ այդ ձևի աշտարակներն ավելի լավ էին դիմադրում թշնամու ավերիչ գործողություններին: Ըստ երևույթին հենց այդ նպատակով էլ պարիսպների ու աշտարակների արտաքին մակերևույթը փոքր-ինչ թեք էր կառուցվում, մի ձև որ ընդունված էր նաև բուն Հայաստանի Ժ—ԺԱ դարերի բերդաշինարարության մեջ (Բջնի և Համբերդ):

Բերդի անառիկությունն ուժեղացնելու համար նրա արտաքին պարագծի սահման-


7 Գր. Գալուստեան, «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զևթուն», Նյու-Յորք, 1934, էջ 230:

ներից դուրս եկած բարաժայրերը տաշում էին այնպես, որ նրանք ուղղահայաց պատերի տեսք էին ստանում: Լամբրոնում, Գուգլակում, Պապերոնում, Մուդում այդպիսի տաշովի պատերի բարձրությունը 10—15 մետրի է հասնում: Բերդի ամրացման այս միջոցը բուն Հայաստանում հայտնի է դեռևս ուրարտացիների ժամանակներից (Վանի բերդը) և ավելի ուշ (Կապանի Բաղաբերդը Ե—2 դարերում): Ավելի բարդ ունիվերսալ ղեկավարում, ինչպես օրինակ Լեոնկլայում խոցելի տեղերն ամրացնելու համար դիմում էին միջանկյալ պարիսպների կառուցման միջոցին, որով ստեղծվում էին պաշտպանության մի քանի հաջորդական գծեր (ճկար 5):

Բերդի դարբասի մատուցները և ներքին ուղիները, որպես պաշտպանության առավել թույլ տեղեր, հնարավորին շափ բարդացվում էին: Ճանապարհը գցվում էր զանաթափ լանջով այնպես, որ հարձակվողները դարպասին մոտենան աչ կողմից, և այդ նրանց դնում էր անբարենպաստ պայմանների մեջ: Երբեմն բերդի մուտքը բարդացվում էր նաև նրանով, որ դարբասը բացվում էր ճանապարհի մակերեսից բավական բարձր, և ներս մտնելու համար հարկավոր էր լինում բարձրանալ աստիճաններով: Այդ արվում էր նրա համար, որ զինված ձիավորը չկարողանա օրոճարանալ ու դարբասից ներս մտնել: Գուգլակում, օրինակ, դարբասի առջևի սանդուղքն ավելի քան 60 աստիճան ուներ, իսկ Պապերոնում՝ մոտ 150 աստիճան⁹: Ավելացվում էր նաև դարբանների թիվը, որոնք հաջորդաբար դասավորվում էին ոլորապտուլտ ճանապարհին: Սովորաբար դարբասների թիվը երկուսից պակաս չէր լինում: Անազարբայում, օրինակ, կար 4 դարբաս, իսկ Լամբրոնում՝ 5, որոնցից երկուսը և ճանապարհի մի մասը փորված էին ժալուզանգովածում: Դարբասները պաշտպանվում էին իրար մոտիկ կառուցված հզոր աշտարակներով, որոնց մեջ պահակազորն էր գտնվում:

Ամենից ավելի խոշորն էին Անազարբայի և Սաի բերդերը:

Անազարբայի բերդը, որ բարձրանում էր բաղաձիգ գլխին 200 մետր բարձրությամբ գառիթափ լանջերով բլրի վրա, տեղանքին համաձայն բաժանվում էր վերին ու ստորին մասերի, որոնք շրջափակված էին երկշարք բարձր պարիսպներով: Ստորին մասը հրնգանկլունի էր և ուներ 56 քառակուսի աշտարակ: Աշտարակների լայնությունը մոտ 11,5 մետր էր, նրանց միջև ընկած տարա-



Նկար 6.— ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ-Ի ՈՍԿԵՐԱՄԸ ՍՈՍԻ ԲԵՐԴԻ ՊԱՏԿԵՐՈՎ

ծությունը՝ 34 մետր: Վերին մասի աշտարակները կիսակլոր էին: Արևմտյան դարբասի առջև գտնվում էր մի հաղթակամար: Առավել ուժեղ ու անմատչելի էր համարվում Սաի բերդը, որ կառուցել էր Լեոն Բ-ը: Այս բերդի բարեկարգումով և ամրացումով ղրաղվել էին Կիլիկիայի համարյա բոլոր հալ թագավորները, սկսած ԺԲ դարի 70-ական թվականներից մինչև պետության անկումը, որի մասին վկայում են նրանց դրամների վրա արված մակագրությունները¹⁰: Կոստանդին Դ-ի (1345—1363 թ. թ.) ոսկե դրամի վրա բացի «Սոս բերդն է թագաւոր» մակագրությունից, զետեղված է նաև երեք աշտարականի մի շենքի պատկեր, որն արտահայտում է բերդի ծավալա-տարածական կոմպոզիցիոն առանձնահատկությունը (ճկար 6)¹⁰:

Սաի բերդը, որ գտնվում է լեռան գագաթին, տեղանքին համապատասխան երկարավուն ձև ունի և բաժանված է երեք անջատ-անջատ մասերի, որոնք միմյանց հետ հաղորդակցվում են ստորերկրյա ուղիներով: Բերդի հաստ պարիսպները և մեծ մասամբ կիսակլոր, մոտ-մոտ դասավորված աշտարակները, համապատասխան իրենց տեղի ու նշանակության, տարբեր բարձրություն ու շափեր ունենին (ճկար 7): Առավել շատ էր ամրացված ստորին մասը, որտեղ գտնվում էր նաև ստորերկրյա ջրամբարը՝ սանդուղքով:

9 Վ. Լեոգլյուա, «Միջնադարյան Հայաստանի դրամագիտություն», Փարիզ, 1855, էջ 46—48, 59—60 և այլն (Ֆրանսերեն):

10 Նույն տեղում, էջ 90, աղյուսակ III, 9:


⁹ Վ. Ալիջան, նշված աշխատությունը, էջ 126—287:

Բերդի եկեղեցին, պալատականների բնակելի շենքերը և երկրորդ ջրամբարը գտնվում էին հյուսիսային մասում: Բերդի բոլոր երեք մասերում էլ կային զանազան շենքեր, որոնք մասամբ փորված էին ժայռազանգվածի մեջ¹¹:

Ամրույթի զգալի սիստեմ են ունեցել նաև Կիլիկիայի դաշտավայրային մասում գտնվող քաղաքները, մանավանդ՝ առևտրական քաղաքները: Քաղաքի տերիտորիան շրջափակվում էր պարիսպներով, որոնց աշտարակները վերջանում էին հրակնատներով: Պարսպից դուրս խոր խանդակ էին փորում

սում և ըստ շինարարական արձանագրության, պարսպի հետ միասին վերակառուցել է Հեթում Ա-ը 1228—1229 թվականներին¹³, իրենից ներկայացրել է սլաքանման բարձր բացվածքով մի մեծ պիլոն, որ եղբրված է եղել տրամատված արխիվոլտով (նկար 8): Տարսուաի շինարարության մասին մեղ հայտնի է նաև Կոստանտին Դ-ի դրամի վրա եղած մակագրությունից¹⁴:

Այս և Կորիկոս (նկար 9) նավահանգիստները, բացի աշտարակավոր պարիսպներից ու խանդակներից, ունեցել են նաև երկուսական բերդ, մեկը ծովի ափին, մյուսը



Նկար 7.— ՍԻՍ ԲԵՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ

և ջրով լցնում: Քաղաքի դարբասի առաջ այդ խանդակի վրա գցում էին շարժական կամուրջ:

Տարսուա քաղաքը, որտեղ ըստ սովորության թագադրվում էին Կիլիկյան Հայաստանի թագավորները, ըստ Իբն-Հատուկի նկարագրության, ունեցել է երկու շարք պարիսպներ: Ըստ Յակուդի նկարագրության, այդ պարիսպներն ունեցել են վեց դարբաս և շրջապատված են եղել խոր խանդակով¹²: «Որկաթ դարբասը» («Դեմիր գափու»), որ գտնվում էր քաղաքի հարավ-արևելյան մաս-

մերձակա կղզու վրա, որն ափի հետ միացած է եղել ծանծաղուտով և նավակայանը պաշտպանել է ծովային ալիքներից¹⁵:

Կորիկոսի ծովափնյա բերդը, որ իր տարածության մեջ է, մասամբ կառուցված է եղել ժայռի վրա (նկար 10): Նրա արտաքին պարսպի հիմքից ցած ժայռը տեղտեղ տաշված է պարսպին ավելի մեծ բարձ-

¹¹ Վ. Լանգլուա, «Ճանապարհորդություն Կիլիկիայում...», էջ 384—387:

¹² Գ. Լա Ստրանո, «Արևելյան խալիֆայթի երկրները», Քեյմբրիջ, 1905, էջ 132 (անգլերեն):

¹³ Վ. Լանգլուա, «Կիլիկիայի... արձանագրությունները», էջ 325:

¹⁴ Վ. Լանգլուա, «Միջնադարյան Հայաստանի դրամագիտություն», էջ 92:

¹⁵ M. Sanuto, «Liber secretarum fidelium crucis...», Hanovia, 1611, p. p. 88—89.



Նկար 8.— ՏԱՐՍՈՍԻ ՔԱՂԱՔԻ «ԳԵՄՒՐ-ԳԱՓՈՒ» ԴԱՐՐԱՍԱՐ

րութիւն տալու համար¹⁶։ Պարիսպների առաջ եղել է խանդակ, որի մեջ լցվել է լեռան լանջով հոսող գետակի ջուրը և ջրի բարձրութեան մակարդակը կարգավորվել է ջրարգելակի միջոցով։

Մովսիսի բերդը, որ կառուցել է Հեթումյանների հարստութեան ազդական Հեթում պատմագիրը, ունի անկանոն բազմանկյունու ձև, պարագծով շրջափակված է հաստ պարիսպներով, որոնց աշտարակները հյուսիսային մասում կլոր են, հարավայինում՝ քառակուսի (Նկար 11)։ Գլխավոր բնակելի աշտարակը, որի վրա կան Լեոն Բ և Հեթում Ա թագավորների արձանագրութիւնները, քառակուսի է և պաշտպանում էր բերդի դեպի բաց ծով դուրս եկող անկյունը։ Այդ բերդում եղել են ոչ միայն բնակելի և սպասարկող շենքեր, ինչպես նաև երկու ժայռափոր ջրամբար, այլև մի փոքրիկ մատուռ։ Շենքերից ազատ պարսպի երկարութեամբ եղել է կամարակապ սրահ (ավերակները մնացել են արևմտյան մասում), որի տանիքից պատերում եղած հրակնատների միջոցով բերդի պաշտպանները կո են մղել թշնամու հարձակումը։ Կղզու շուրջը ջրի մեջ գցված են խոշոր քարեր, որոնք թշնամու նավերին խանգարել են մոտենալ ափին ու զորք հանել ցամաք։

Պակաս չի ամրացված եղել նաև Այսախ ծովային բերդը։ Այն բաղկացած է եղել մի բարձր գլանաձև աշտարակից և նրան կից մի երկար կամարակապ շենքից, որն ունեցել է նեղ ուղղանկյուն լուսամուտներ¹⁷։

16 Վ. Լանգլուա, «Ժնանապարհորդութիւն Կիլիկիայում...», էջ 213—216։ Գյուլեթ, «Մերիամիկ և Կոթիկու», «Փոքր Ասիայի անտիկ հուշարձանները», հատոր 2, Մանչեստր, 1930, էջ 161—168 (գերմաներեն)։

17 Ղ. Ալիշան, նշված աշխատութիւնը, էջ 360։

Ամրոցներում ու բերդերում հաշվի են առնել նրանց բնակիչների առավելագույն հարմարութիւնները։ Բոլոր խոշոր բերդերում, բացի բնակելի և տնտեսական շենքերից, եղել են նաև զարդաքանդակներով ու ոսկով շքեղորեն զարդարված դահլիճներ՝ հանդիսավոր ընդունելութիւնների համար (Սիս, Անազարբա, Լամբրոն, Լեոնկլա)։

Մատուռ սովորաբար կառուցվում էր կամարակապ դահլիճի ձևով։ Լամբրոնում այն գրավում է ութկողմանի կամարակապ աշտարակի ներքեի հարկը, իսկ նրան մոտիկ գտնվող աշտարակային բերդում՝ վերին հարկը։ Սսում և Անազարբայում մատուռը կառուցված է որպես ինքնուրույն շենք¹⁸։ Շատ բերդերում, ինչպես նաև Լեոնկլայում, եկեղեցիները փորված են եղել ժայռազանգվածի մեջ։ Եկեղեցիները ներսի կողմից պակաս շենք զարդարված եղել, քան բերդերի շքադահլիճները։ Առանձնապես գերադասութիւն է տրվել որմանկարներին, որոնց մնացորդները դեռ անցյալ դարում պահպանված են եղել Վ. Լանգլուայի հետազոտած եկեղեցիներում¹⁹։

Բերդերում անպայման եղել է նաև բաղնիք, որի պատերը և լողադահլիճի հատակը հաճախ երեսպատված են եղել մոզաիկ սալիկներով և տաքացվել են հատակի տակով անցնող տաք օդով։ Այդպիսի սալիկներ մնացել են Անամուր բերդի բաղնիքում²⁰։

Հատուկ ուշադրութիւն է դարձվել ջրամատակարարման վրա։ Ջրամբարները փորվել են ժայռերի խորքում (Գուլզակ, Սիս, Լեոնկլա), կամ կառուցվել են քարով (Այնթաք, Սիս), սովորաբար ուղղանկյուն ձևով։ Շատ բերդեր ունեցել են երկուական ջրամբար (Այնթաք, Գուլզակ, Սիս), զանազան բարձրութիւնների վրա և զանազան տեղեր։ Դրանցից մեկում հավաքել են խմելու ջուր, որ ստացվել է մոտակա առվակից (Կապուն, Այնթաք), կամ թե գետնի տակով բերվել է հեռավոր աղբյուրներից՝ կավի խողովակների միջոցով (Պապերոն, Սիս)։ Երկրորդ ջրամբարի ջուրը, որ հաճախ անձրևաջուր է եղել, օգտագործվել է կենցաղային կարիքների համար։ Հարթավայրի բերդերն ու քաղաքները ջուր ստացել են մերձակա գետակներից։ Անհրաժեշտութեան դեպքում ջուր են բերել հեռավոր վայրերից, որի համար կառուցել են ջրանցույց կամուրջներ (ակվեդուկներ), կամ թե ցփագործել են հոսմեական տիրապետութեան ժամանակներից մնա-

18 Վ. Լանգլուա, «Ժնանապարհորդութիւն Կիլիկիայում...», էջ 360, 386, 440։


19 Նույն տեղում, էջ 212։

20 «Կիլիկիա», էջ 258։

ցած նույնանման կառուցումները (Աղանա, Անազարբա)²¹։

Կիլիկիայի քաղաքային բնակավայրերն իրենց բնույթով կրկնում էին բուն Հայաստանի քաղաքների տիպը։ Նրանք հայտնի էին իրենց գեղեցկությամբ և շենքերի շքեղությամբ։ Քաղաքը բաղկացած էր միջնաբերդից, ներքին քաղաքից և երբեմն նաև

ներքին քաղաքի կենտրոնում գտնվում էին գլխավոր հրապարակը, որ սովորաբար առևտրական հրապարակ էր լինում և փողոցներով կապված էր քաղաքի դարբասների հետ։ Նեղ, ծուռումուռ, սովորաբար շալահատակված փողոցները եզրագծված էին լինում տների խուլ ճակատներով և ցանկապատներով։ Հասարակական շենքերը և ա-



Նկար 10.— ԿՈՐԻԿՈՍԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ ԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

արտաքին բնակավայրից (Կորիկոս)։ Քաղաքի տերիտորիան բաժանվում էր առանձին-առանձին մասերի, շենքերը կառուցված էին խիտ²²։ Միջնաբերդի մոտ կամ

²¹ «Կիլիկիա», էջ 103, 167։

²² Քաղաքի այդպիսի բաժանում եղել է նաև Ջեյթունում, անցյալ դարի վերջում։ Տե՛ս Դր. Դալուստյան, նշված աշխատությունը, էջ 362։


ռևտրա-արհեստավորական ձեռնարկությունները սովորաբար կենտրոնացած էին լինում գլխավոր հրապարակում և նրան հարակից փողոցներում։ Միատեսակ աշխատանքով զբաղվող արհեստավորները տեղավորված էին լինում մեկ տեղ։ Օտարերկրացիներն ապրում էին առանձին թաղերում, որտեղ բնակարաններից բացի ունենում էին նաև

իրենց բաղնիքները, պանդոկները, իջևանները, գանազան արհեստանոցներ և նույնիսկ կեղեցիկներ ու գերեզմանատներ²³:

Դաստակերտերի կառուցվածքը պատահական էր լինում: Ըստ ժԸ—ժԹ դարերի տվյալների՝ քաղաքների տները լինում էին մեկ-երկու հարկանի, հազվադեպ՝ եռահարկ: Վերին հարկերը բնակելի մասն էին լինում, ցածր հարկերը նախատեսված էին տնտեսական կարիքների համար: Տների առաջ լինում էր մի բաց տարածություն, որը

Քեք վայրերում գտնվող քաղաքներում տները կառուցվում էին տեքրասածե և իրար շատ մոտիկ: Հաճախ ցածում գտնվող շենքի կտուրը իրենից վերև գտնվող տան համար ծառայում էր որպես բակ և նույնիսկ որպես փողոց: Այդպիսի քաղաքներն իրենց յուրահատուկ ուրվագծով ներդաշնակում են շրջապատի լեռնային տեսարանի հետ:

Աշխարհիկ շենքերի մեջ լավագույնն էին թագավորների ու իշխանների պալատները:




Նկար 11.— ԿՈՐԻԿՈՍԻ ԾՈՎԱՅԻՆ ԲԵՐԳԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

սանդուղքով կապված էր լինում ցանկապատով ու ամուր դարբասով պաշտպանված բակի հետ: Տան կտուրը տափակ էր լինում և օդտազործվում էր գիշերներն այնտեղ հանգստանալու, ինչպես և այգիներից ստացված պտուղները շորացնելու համար: Կանաչը քաղաքներում քիչ էր, եղածները մեծ մասամբ պտղատու ծառեր են եղել և որթատունկ, որը բակի գլխին գեղեցիկ կանաչ ծածկ էր կազմում²⁴:

Լևոն Բ թագավորի պալատը Սիս քաղաքում, որ հայտնի է «Դարբաս» անունով, գլանաձև բազմահարկ շենք է եղել: Հյուսիսային, արևմտյան և հարավային կողմերում այդ շենքը մուտքեր է ունեցել, իսկ մուտքերից բարձր՝ լուսամուտներ: Արևելյան կողմում եղել է երեք լուսամուտ, որոնցից մեջտեղինը՝ կլոր: Պալատի սենյակներից աչքի են ընկել ընդունելության դահլիճը, որը սև մարմարից կառուցված սյուններ է ունեցել, ապա՝ ձեռագրերի թանգարանը և գրադարանը: Ծակատի պատերը զարդարված են եղել քանդակներով, ներսի կողմը՝

²³ Ղ. Ալիշան, Նշված աշխատությունը, էջ 362:

²⁴ Գր. Գալուստյան, Նշված աշխատությունը, էջ 269—270:



Նկար 12.— ԱՆԱԶԱՐՔԱՅԻ ԶՈՐԱՎԱՐԱՆՑ ԵՎԵՂԵՑՈՒ ԶԱՏԱԿԱԳԻՄՐ

փորագրություններով, մարմարե երեսապատումով, մոզաիկ և ոսկեզույն նկարներով: Երեկոյան հանգստի համար նախատեսված տափակ կտուրից երևացել է քաղաքի գեղատեսիլ շրջակայքը: Քառակուսի բակի տերիտորիայում, որը շրջափակված է եղել կիսակլոր աշտարակներ ունեցող հզոր պարսպով, բացի զանազան տնտեսական շենքերից, եղել են նաև ժայռափոր բանտ և ջրամբար: Պալատի մոտ եղել է Լևոն Բ Թագավորի հիանալի այգին²⁵:

Շքեղ պալատներ են եղել նաև Անագարայում, Ադանայում, Տարսոնում, Այասում, Լամբրոնում:

Քաղաքային շենքերի մեջ զարդարուն ճակատներով և շքադահլիճներով աչքի են ընկել հյուրանոցներն ու իջևանները, որոնք լայնորեն տարածված են եղել առևտրական ու արտադրական շենքերի հետ միասին, որպիսիք են ձիթահանքերը, ջրաղացները և այլն: Արևելյան տիպի բաղնիքները զարդարված էին մարմարով ու մոզաիկայով և աչքի էին ընկնում սենյակների հարմարություններով: Կառուցվում էին նաև դպրոցներ ու հիվանդանոցներ: Սաի հիվանդանոցը, որ հանդիսավորապես բացվել է 1241

25 Վ. Լանգուա, «Ճանապարհորդություն Կիլիկիայում...», էջ 387—388:

թվականին, ունեցել է նաև ջրմուղ ու լողավազաններ²⁶:

Լայն զարգացում է ունեցել կամրջաշինարարությունը: Բերդերի դարբանների առաջ, բացի շարժական կամուրջներից, կառուցում էին նաև մշտական քարե կամուրջներ: Լեոնային շրջանների համար բնորոշ են միակամար, ոչ լայն կամուրջներ՝ 5—15 մետր թռիչքով, որոնք ձգված են մի ժայռից դեպի մյուսը: Կամարները մեծ մասամբ սլաքածե են, իսկ բարձրությունը գետի մակերևույթից երբեմն բավական մեծ է. Տարսուսի և Լամբրոնի միջև Կյուլֆնոս գետի վրա կառուցված կամուրջը մոտ 20 մետր բարձրություն ունի, իսկ Զեյթունի մոտ Շուհարի գետակի վրայի կամուրջը՝ 35 մետր²⁷: Հարթավայրային Կիլիկիայի կամուրջները սովորաբար բազմակամար են, բավական երկար: Սրանց կամարները ևս սլաքածե են. կիսակլոր կամարներով կամուրջները, օրինակ՝ Ադանայում, վերաբերում են հռոմեացիների և բյուզանդացիների ժամանակներին: Մսիսի ինը կամարանոց կամուրջը բնորոշ է նրանով, որ նրա կենտրոնական մասը բարձր է առափնյա տեղանքից, որը և նրան գեղատեսիլ գծագրություն է տալիս²⁸:

Եկեղեցական շենքերի ճարտարապետությունը Կիլիկյան Հայաստանի ճարտարապետություն մեջ վճռական նշանակություն չի ունեցել, բայց և այնպես համարյա յուրաքանչյուր ամրոցում ու բերդում եղել է մեկական եկեղեցի, իսկ քաղաքներում՝ մի քանիսը: Ստում, օրինակ, քսանից ավելի եկեղեցի է եղել:

Եկեղեցու ամենատարածված ձևը եղել է վաղ ժամանակների միանավ և եռանավ բազիլիկը: Ամրոցներում, բերդերում և մայր բնակավայրերում մեծ մասամբ կառուցում էին միանավ բազիլիկ: Ըստ կոմպոզիցիայի, դա լինում էր երկարավուն կամարակապ դահլիճ՝ արևելյան կողմում կիսաշրջանաձև արսիդով, որ մտնում էր շենքի արտաքին ուղղանկյունի գծագրության մեջ: Երբեմն այդպիսի եկեղեցիներ փորվում էին նաև ժայռազանգվածներում (Չանդեր, Լևոնկլա բերդերում և այլուր)²⁹:

Խոշոր բնակավայրերում ու քաղաքներում կառուցում էին եռանավ բազիլիկ, սովորաբար շորս սյուների վրա. դրա ամենահին օրինակն է Զորավարանց եկեղեցին Անա-


26 Նույն տեղում, էջ 223:

27 Գր. Գալուստյան, նշված աշխատությունը, էջ 22, 89:

28 Ղ. Ալիշան, նշված աշխատությունը, էջ 250:

29 Նույն տեղում, էջ 74, 251:

դարբայում (ԺԲ դարի սկիզբ)³⁰: Կամարածածկ նաւերն արեւելյան կողմում վերջանում էին արսիդներով, որոնք զետեղված էին լինում հատակագծի ուղղանկյունի պարագծի մեջ (նկար 12): Արսիդների բարձրությունն ավելի պակաս է, որ արտահայտվում է շենքի արտաքին ծավալի մեջ: Ծարտարապետական ձևավորումն աչքի է ընկնում համեստ զարդարանքով, մանավանդ ներսի կողմը: Ուղղանկյունի սյուները վերջանում էին որմանկարներով³¹: Արեւելյան ճակատի առանձնահատկությունը երկու որմախորշերի առկայությունն է, որ բնորոշ է բուն Հայաստանի հուշարձանների համար: Բացվածքները հորիզոնական վերջավորություն ունեն: Դռան շրջակալն ունի շքեղորեն զարդարանդակած սլաքածե շրջանակ: Քիվը շքեղացված է՝ նրա ցածում, պատի մակերեսին զետեղված բարձրաքանդակ արձանագրությամբ:



Նկար 13.— ՀՈՈՄԿԱՍԻ ԶԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՅՈՒՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԽՈՅԱԿ

Խոշորագույն բազիլիկների շարքին է պատկանում Կորիկոսի պարիսպներից դուրս գտնվող մեծ եկեղեցին (ԺԲ դարի վերջ, ԺԳ դարի սկիզբ), որը վերակառուցումների հետևանքով արեւելյան ճակատում ստացել է կիսակլոր արսիդներ³²:

Ավելի ուշ սկսել են կառուցել նաև գմբեթավոր եռանավ բազիլիկներ: Դրանց թվին է պատկանում ԺԳ դարի 30-ական թվականներին Հեթում առաջինի կառուցած Ս. Սոֆիա եկեղեցին Սսում, որ ամենամեծն է Կիլիկիայի եկեղեցիներից և 1292-ից մինչև 1441 թվականը եղել է ամենայն հայոց կաթողիկոսների, իսկ այնուհետև մինչև 1921 թվականը՝ Կիլիկիայի կաթողիկոսների Մայր Տաճարը: Ս. Սոֆիա եկեղեցին բազմիցս փոփոխությունների է ենթարկվել, այնուամենայնիվ նրանից պահպանվել են սկզբնական շենքի որոշ մասերը, որոնք գաղափար են տալիս նրա ճարտարապետության մասին³³:

Ս. Սոֆիա եկեղեցին գտնվում էր թագավորի պալատի կողքին: Ներքին մասն արեւելյան կողմում վերջավորվում էր բեմով և նրա երկու կողմերի երկհարկանի խորաններով: Շենքի կենտրոնը պսակում էր չորս սյունի վրա հենված վիթխարի գմբեթը: Ներսի երեսի զարդարանքն են քարի (մարմարի

ու գրանիտի) և փայտի վրա կատարված զարդարանքները, որմանկարները, որոնք իրենց հարուստ երանգավորումով կապված են մանրանկարչության հետ, և դեղեցիկ արձանագրությունները: Թագավորի համար բեմից դեպի աջ դրված է եղել մի մարմարե դահլ՝ զարդարված բուսական նախշերով և առյուծի ու արծիվների պատկերներով: Տաճարին կից եղել է մի քառակուսի բազմաճարկ դանդակատուն:

Ներքին չորս սյուներով եռանավ բազիլիկի տիպին են պատկանում Պապերոնի, Հոռմկլայի, Աղանայի պալատին կից Ս. Մինաս և այլ եկեղեցիները: Բազմաթիվ եկեղեցիների զեկորատիվ զարդարանքներից մտացած բեկորները՝ Հոռմկլայում քանդակազարդ խոյակը (նկար 13), Պապերոնում՝ քանդակազարդերն ու որմանկարները, Տարսուսի Ս. Կույսի եկեղեցում՝ մոզաիկան, Տարսուսի Ս. Պետրոս ու Ս. Սոֆիա եկեղեցիներում քանդակազարդ մարմարով երեսապատումը վկայում են Կիլիկյան Հայաստանի եկեղեցիների ներսի կողմի շքեղ ձևավորման մասին, որ արտացոլում է Բյուզանդիայի ազդեցությունը³⁴:

Վանքերը կառուցվում էին քաղաքներում, շատ թե քիչ խոշոր բերդերի մոտ, որոնց տների համար դրանք ծառայում էին որպես տոհմական հանգստարան: Այդպես էին Մլիշովանքը Պապերոնի համար, Սկևան

³⁰ Վ. Լանգլուա, «Ժամանակագրորդություն Կիլիկիայում...», էջ 440.—Փ. Սուրգիլովսկի, «Հայերի շինարարական արվեստը և նվիրողան», Վիեննա, 1918, էջ 741—742 (գերմաներեն):
³¹ Վ. Լանգլուա, «Ժամանակագրորդություն Կիլիկիայում...», էջ 440:
³² Ս. Գյուսե, «Մերիամիկ և Կորիկոս», էջ 150—154:
³³ Վ. Լանգլուա, «Ժամանակագրորդություն Կիլիկիայում...», էջ 388—397:

³⁴ Նույն տեղում, էջ 317—319:

Լամբրոնի համար³⁵: Նայած տեղանքին, վանքի տերիտորիան պաշտպանվում էր աշտարակավոր հաստ պարիսպներով, (Ս. Հակոբի վանքը Հաջինից հյուսիս)³⁶, որ հնարավորություն էր տալիս վանքն օգտագործելու որպես պաշտպանություն կեռ՝ երկար ժամանակով: Վանքի շենքերը սահմանափակվում էին մեկ-երկու տաճարով, երկու-երեք մանր մատուռներով, զանգակատնով, բնակելի և օժանդակ շինություններով: Գավիթները կամ ժամատները, որոնք բուն Հայաստանում լայն տարածում ունեին, Կիլիկիայում չէին կիրառվում: Միայն Գուգլյակ բերդում մնացել են առանձին կանգնած սյունազարդ մի դահլիճի ավերակներ, որ հեռավոր չափով հիշեցնում են ժամատուն: Տարածում են ունեցել զրադարանները և ուսումնական հաստատությունները, որոնց մեջ ստեղծվում էին մանրանկարչությանը զարդարված ձեռագրեր և ուղարկվում աշխարհի բոլոր հայ գաղութները:

Հայտնի են դեպքեր, երբ վանքը (օրինակ Սկևայում) բաղկացած է եղել շենքերի երկու առանձին խմբերից՝ բուն վանքը և անապատը³⁷, որոնք գտնվել են տարբեր տեղեր:

Լայն հռչակ են վայելել հետևյալ վանքերը. Դրազարկը Անազարբայից արևմուտք, Արքակաղինը՝ Մսիսի մոտ, Սկևան՝ Լամբրոնի մոտ, Ակները՝ Կապիտար բերդից դեպի հյուսիս:

Գերեզման-հուշարձաններից լայն տարածում են ունեցել տապանաքարերը, որոնք զարդարված են եղել զարդաքանդակներով և աշխատանքի գործիքներ պատկերող քանդակներով: Օրինակ՝ առևտրականի տապանաքարի վրա քանդակվել է կշեռք, դարբինի՝ մուրճ, աքցան, գիտնականի՝ թանաքաման, կնոջ՝ ասեղ ու մի կծիկ թել: Տարածված էին խաչքարերը ևս, որոնք կանգնեցվում էին նաև ի նշանավորումն զանազան անցքերի, օրինակ՝ շինարարական աշխատանքների կատարման: Այդպիսի խաչքարեր կան Սելևկիայի բերդի աշտարակների պատերում և առափնյա Կորիկոս բերդի պատերում³⁸:

Կիլիկյան Հայաստանի ճարտարապետությունը շարունակությունն էր բուն Հայաստանի ճարտարապետության, որն ընդհատվել էր ԺԱ դարի կեսերին սելջուկների արշավանքի հետևանքով: Ծարտարապետության զարգացման մեջ քաղաքացիական

շենքերը վճռական նշանակություն չեն ունեցել. ինչպես և պաշտամունքային շենքերը, որոնք սահմանափակվել են Հայաստանում մշակված տիպերի կրկնումով՝ հարավարևելի տեղական պայմաններին: Թեպետև Կիլիկիայում հետևում էին հայկական ավանդություններին, սակայն դրանք տոգորված են նոր ազդեցություններով, որ հետևանք էր Ասիայի ու Եվրոպայի երկրների հետ ունեցած շփման, և հիմնականում արտահայտվում էր շենքերի դեկորատիվ զարդարումների մեջ:

Այսպիսով կարելի է հետևություն անել, որ շինարարության բոլոր տեսակներից առավել մեծ հաջողություններ ձեռք են բերվել պաշտպանական կառուցվածքների բնագավառում: Որոշ հիմք կա ասելու, թե քարից լեռնային ամրոցներ ու բերդեր կառուցելու արվեստը արտացոլում է գտել խաչակիրների շինարարության մեջ, որ կատարում էին նրանք Սիրիայում (Ասորիք) և Պաղեստինում իրենց նվաճած տերիտորիաներում:

Արշավանքների առաջին իսկ օրերին ընդհարվելով իրենց անծանոթ ուժեղ ամրությունների հետ՝ խաչակիրները հարկ եղած չափով գնահատեցին նրանց բարձր պաշտպանունակությունը: Նվաճած տերիտորիան յուրացնելու անհրաժեշտությունը նրանց ստիպում էր ոչ միայն օգտագործել բլուզանդացիների ժամանակներից գոյություն ունեցող բերդերը, այլև նորերը կառուցել: Սակայն անծանոթ լինելով իրենց համար նոր պաշտպանական շենքերին՝ խաչակիրներն ստիպված էին շինարարության մեջ ներգրավել տեղական վարպետներին, որոնք, ըստ երևույթին, հիմնականում հավաքվում էին կիլիկյան հայերից:

Ինչպես բազմաթիվ փաստական տվյալները վկայում են, խաչակիրները բավական արագ կիլիկյան հայերի հետ հաստատեցին բարեկամական կապեր և մշակութային ու տնտեսական փոխանակություն: Դրա մի ապացույցն էլ այն է, որ Կիլիկիայի հայ թագավորները մի քանի սահմանամերձ ամրոցներ հանձնեցին տաճարականների (թամպլյերներ), հյուրընկալների (գոսպիտալյերներ) և տևառների ուխտի խաչակիրներին³⁹: 1191 թվականին Լևոն Բ-ը հյուրընկալների անձնական օգտագործման հանձնեց Բաղրաս և Դարբեսակ ամրացված քաղաքները, 1210 թվականին հանձնեց Սելևկիա քաղաքը, Նորբերդ և Կամարբերդ ամրոցները: 1224 թվականին հյուրընկալները տիրում էին նաև Վաներ քաղաքին և Կալումեյ-

35 Ղ. Ալիշան, *Նշված աշխատությունը*, էջ 74, 97:
 36 Նույն տեղում, էջ 166:
 37 Նույն տեղում, էջ 97:
 38 Ս. Գյուլեռ, «Մերիամիկ և Կորիկոս», էջ 178, — Ի. Քայլ և Ա. Վիլհելմ, «Դաժանատես Կիլիկիայի հուշարձանները», էջ 4, նկար 5:

39 Վ. Լաեզուա, «Հայաստանի դաշինքի գանձը», Վենետիկ, 1863, էջ 74 (Ֆրանսերեն):

լա նավահանգստին՝ իրենց շրջաններով⁴⁰, Լևոն Բ-ը 1212 թվականին տևտոնյան ուխտին ընծայեց Ամուղ բերդը, իսկ 1236 թվականին ուխտը կարողացավ համոզել, որ իրեն զիջվի նաև Խարոնիա բաղաբը իր շքբեկա գյուղերի, վանքերի ու կալվածների հետ միասին⁴¹: 1193 թվականին Լևոն Բ-ի հանդիսավոր թագադրմանը հայկական բերդերի տեր այլ հյուրերի թվում հիշատակվում են նաև խաչակիրներ Բաղդուինը, Ժոֆրին, Ժոսլինը, Կիր-Իսահակը, Կիր-Վարդը⁴²:

Բաղմաթիվ ղեպքերից հայտնի է, որ խաչակիրների վարձու զորքերի մեջ եղել են նաև հայեր: Մարգարտի կայազորում 1118 թվականին ծառայել են Եղեսիայից և Անտիոքից ղեպի հյուսիս գտնվող գյուղերից եկած հայեր⁴³:

Ըստ Հովսեփ Օրբելու հաղորդման, պահպանվել է մի շատ արժեքավոր փաստաթուղթ՝ Վենետիկի վաճառականների առևտրական պայմանագիրը կիրիկյան հայ թագավորի հետ, որի վերջում հատկապես ասված է, որ Վենետիկի վաճառականները պարտավորվում են այսուհետև կիրիկյան որմնադիրներ չփախցնել Վենետիկի շինարարություններում աշխատացնելու համար: Պակաս հատկանշական չէ պատմաբան Վիլհելմ Տյուրոսցու մի հաղորդում, որի մեջ ասված է, որ 1124 թվականին խաչակիրները Տյուրոսի պաշարման ժամանակ նրա ամրություններն ավերելու համար օգտագործում էին անտիոքցի հայ ճարտարագետ Ավետիքին⁴⁴: Հյուրընկալների Սիրիայում կառուցած խոշորագույն բերդերից մեկի՝ Գրակ դե Շրվալլեի (ԺԲ դար) շինաքարերի վրա եղած նշանները, որ հավաքել է Պ. Դե-Նամպեն, ցույց են տալիս, որ այդ բերդի կառուցմանը մասնակցել են նաև հայ վարպետներ, քանի որ այդ նշաններից կան նաև հայկական շենքերի քարերի վրա⁴⁵:

Այս, թերևս նաև նույնանման այլ ապացույցներ հիմք են տալիս հետևություն անելու, որ խաչակիրները սերտ կապեր ունենա-

լով Կիրիկիայի հայերի հետ և տիրապետելով նրանց մի քանի բերդերին՝ կարող էին մանրամասնորեն ուսումնասիրել հայկական բերդերի կոմպոզիցիոն-հատակազածային ու կառուցվածքային առանձնահատկությունները և այդ ամենը հենց հայ կառուցողների ձեռքով իրականացնել իրենց ամրաշինական կառուցումներում:

Ներկայումս, առանց Կիրիկիայի հայկական ամրոցների ու բերդերի մենագրական ուսումնասիրության, դժվար է մանրամասնորեն լուսաբանել այդ կառույցների նշանակությունը այն շինարարության համար, որ կատարել են խաչակիրները Արևելքում: Այսուամենայնիվ ընդհանուր գծերով կարելի է նշել հետևյալը:

Սկզբում խաչակիրները Արևելքում ամրություններ կառուցելիս հետևում էին ինչպես իրենց միջերկրածովյան, անգլո-նորմանդական, այնպես էլ, և առաջին հերթին, բյուզանդական ավանդություններին, որոնք սկիզբ են առել հունահունական ժամանակներից: Վաղ շրջանի բերդերի՝ Տորտոզի, Սուրբյբայի, Ամիրի, Սալամիայի և այլ բերդերի ինչպես ընդհանուր կառուցվածքը, այնպես էլ առանձին մասերը, ներառյալ նաև աշտարակները, որոշակի ուղղանկյունի ձև ունեն: Հետագայում խաչակիրների բերդերը կիրիկյան բերդերի օրինակով սկսեցին օրգանապես կապվել տեղանքի հետ, որ լեռնային պայմաններում հաճախ բարդ էր լինում: Այդպես են Գրակ դե Շրվալլեի, Մարգատ բերդերը⁴⁶:

Այդպիսի ղեպքերում գլխավորապես ուշադրություն էր դարձվում ոչ թե երկրաչափական ձևին, այլ՝ լեռնային բարդ տեղանք ունեցող վայրերում գտնվող բերդի առավել խոցելի մասերի պաշտպանունակությունը բարձրացնելու վրա: Այս կապակցությամբ մեծ նշանակություն ստացան աշտարակները, որոնք դարձան պաշտպանության առանձնապես կարևոր տարրեր: Փոխվեց նաև նրանց տեղադրությունը: Աշտարակներն արդեն կառուցվում էին ոչ թե ամբողջ պատագծում իրարից հավասար հեռավորության վրա, ինչպես ընդունված էր Բյուզանդիայում, այլ՝ առավել վտանգավոր տեղերում և անհրաժեշտ թվով, հաճախ իրարից անհավասար հեռավորության վրա (Գրակ դե Շրվալլեի, Մարգատ)⁴⁷:

⁴⁰ Վ. Լանգլուա, «Հայաստանի գաշինքի գանձը», էջ 113, 122—123:

⁴¹ Նույն տեղում, էջ 112:

⁴² Մարտտ սպարապետ. «Ժամանակագրություն», Մոսկվա, 1855, էջ 100—102:

⁴³ Վառ Բեռլին և Էլմ. Յատիոս, «Ժամանակագրություն Սիրիայում», Կահիրե, 1913—1915, հատ. 2, էջ 319—320 (Ֆրանսերեն):— Պ. Դեշան, «Ասպետների ամրոցը», Փարիզ, 1934, էջ 86 (Ֆրանսերեն):

⁴⁴ Գուլիելմո Տյուրոսցի, «Պատմություն խաչակրաց», հրատ. «Պատմություն արևմտյան խաչակրաց», հատ. 1, էջ 569—570:

⁴⁵ Պ. Դեշան, «Գրակ դե Շրվալլե», էջ 240—259:

⁴⁶ Նույն տեղում, էջ 50—51.—Ռ. Դյուսան, Պ. Դեշան, Ն. Սեգրիզ, «Անտիկ և միջնադարյան Սիրիան», պատկերազարդ, Փարիզ, 1930, նկար 150 (Ֆրանսերեն):

⁴⁷ Պ. Դեշան, «Գրակ դե Շրվալլե», էջ 80.—Ռ. Դյուսան, Պ. Դեշան, Ն. Սեգրիզ, «Անտիկ և միջնադարյան Սիրիան», նկար 131, 132, 152:

Կիլիկյան օրինակներից (Լևոնկլա) ըստ երևույթին փոխ է առնվել երկշարք ու եռաշարք պաշտպանական պարիսպներ ու աշտարակներ կառուցելու սխտեմը, որ օրգանապես կապված է եղել տեղանքի հետ (Գրակ դե Շրվալլե, Մարգատ), ինչպես նաև կիսակլոր ու գլանաձև աշտարակները (Մարգատ, Սալոն, Գրակ դե Շրվալլե), որպիսիք հաճախ կառուցվել են նաև գոյություն ունեցող բերդերում (Սուբեյթա)⁴⁸:

Սեծ զարգացում էր ստացել դոնժոնը, որ գտնվում էր բերդի պաշտպանական սխտեմի առավել պատասխանատու վայրում: Սովորաբար այն մյուս բոլոր աշտարակներից ավելի մեծ ու բարձր էր լինում: Հայկական բերդերի օրինակով (Լամբրոն) խաչակիրներն սկսեցին դոնժոնում ֆեոդալի բնակարանը համատեղել մատուռի հետ (Շաստեի Բլան, Գրակ դե Շրվալլե): Լամբրոնի օրինակով Տորտոզի, Շաստեի Պելերինայի, Աբոն Հուշի (Նորուստեմի մոտ) և Գրակ դե Շրվալլեի բերդերի մատուռներն ունեին որմանկարներ և ճարտարապետական-գեղարվեստական զարդարանքներ:

Բերդի պաշտպանության սխտեմում խաչակիրները մեծ նշանակություն էին տալիս ջրով լի խանրակին, որը Բելվուարի, Մարգատի, Գրակ դե Շրվալլեի, ինչպես և հայկական Գուզլակի, Պապերոնի, Լամբրոնի և այլ օրինակներում փորված է լեռան քարազանգվածի մեջ⁴⁹:

Արևելքում ամրաշինական կառույցների շինարարական տեխնիկան փոխառություն է կիլիկյան ամրոցների ու բերդերի շինարարական տեխնիկայից: Արևելքի շինարարության մեջ տարածում գտած լեռնային ամրոցի տիպը և քարային ճարտարապետության տեխնիկան ամենայն հավանականությամբ խաչակիրները փոխադրել են Արևմտյան Նվրոպա, որտեղ կիլիկյան տիպի ամրոցներ սկզբնական շրջանում, այսինքն ժՔ դարի սկզբում կառուցվում էին բոլորովին այլ պայմաններում, քան այնտեղ, ուր ծնունդ են առել նրանք: Տեղի է ունենում լեռնային ամրոցի տարրերի յուրահատուկ կիրառում՝ դաշտավայրում գտնվող ամրությունների կառուցման մեջ:

Ֆրանսիայում (Նորմանդիայում) խաչակրաց արշավանքներից հետո երևան է գալիս Շաստո Գայար ամրոցը (ժՔ դարի վերջին), որ կառուցել էր Ռիչարդ Առյուծասիր-

տը որպես անառիկ բերդ և որը օրինակ է հանդիսանում Նվրոպայի հյուսիսային մասի պաշտպանողական կառուցումների համար: Այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաև Ավինյոնի, էգ-Մորտի ամրությունները, Կարկաստոնի և Կուսիի գլանաձև աշտարակները: Բնորոշ է Ֆիլիպ Ալզասցու ամրոցը Գենտում (1176—1180 թ.թ.), որը 24 ուղղանկյունի որմասյունների վրա ունի խոշոր կիսակլոր պահակային աշտարակներ, որոնք ուժեղացնում են պարիսպների բազմանկյունու անկանոն գծազրույթունը:

Պիրենյան թերակղզում ցուցանշական է տաճարականների (տամպլիոնների) Թոմար ամրոցը (ժՔ դարի կեսը)⁵⁰: Տեղանքին հարմարեցված լինելով՝ նա ունի հատակագծի բարդ տեսք, և ներքին պարիսպներով բաժանված է մեկուսացված մասերի: Պարագծային պարիսպը արտաքուստ ուժեղացված է շեղապատերով, աշտարակները մեծ մասամբ կիսակլոր են, սնամեջ և խուլ: Ամենամեծ շենքը, որտեղ գտնվում է նաև եկեղեցին, կլոր աշտարակ-ոտտոնդի ձև ունի և պարագծով ուժեղացված է, տասնվեց հզոր որմահեցերով:

Խաչակրաց արշավանքները որոշ ազդեցություն են ունեցել նաև Արևմտյան Նվրոպայի՝ Պիրենյան թերակղզու, Ֆրանսիայի, Անգլիայի. եկեղեցական շենքերի շինարարության վրա: Այլևայլ ուխտերի խաչակիրների Արևելքում եղած ներկայացուցիչների կառուցած եկեղեցիների ճնշող մեծամասնությունն ըստ հատակագծի պատկանում է կլոր կամ բազմակողմ տիպին: Սեգովիում հետաքրքիր է եկեղեցի-ամրոցը (ժՔ դարի վերջ ժՎ դարի սկիզբը). դա կլոր հատակագիծ ունի, արևելյան կողմում երեք հատ բավականին առաջ եկած խորաններ և հարավ-արևելքում մի քառակուսի աշտարակ⁵¹: Արտաքուստ և ներքուստ քառաբսիդ ձև ունի Մոնմաժուրի Ս. Խաչի կապելան, իսկ ութկողմանի ձև ունեն Մոնմորիտոնի կապելլան, Լանիի, էյնատի «Տամպլիտներ», Տորրես դել Ռիոյի Տիրոջ Դագաղի, Լոնդոնի Տեմպլ կապելլաները և Լուվրի, Նորտհամպտոնի ու Քեյմբրիջի եկեղեցիները⁵²:

Տևտոնյան ուխտի խաչակիրներն, ըստ երևույթին, նպաստել են Արևելքի ամրոցաշինական եղանակները փոխադրելու նաև

⁴⁸ Պ. Դեշան, «Գրակ դե Շրվալլե» էջ 80:—Ռ. Դյուսան, Պ. Դեշան, Հ. Սեգրիգ. «Անտիկ և միջնադարյան Սիրիան», Կար 120—122, 127, 131, 132, 152, 158:

⁴⁹ Նույն տեղում, էջ 120—122, 127, 138:

⁵⁰ Է. Լամբրոն, «Տաճարականների ճարտարապետությունը», Փարիզ, 1955, էջ 76—87 (Ֆրանսերեն):

⁵¹ Նույն տեղում, էջ 85—87:

⁵² Նույն տեղում, էջ 35, 39, 47, 50—52, 75—79:

Մերձբալթիկա: Տալլինի, Նարվայի, Ռիգայի և այլ վայրերի քաղաքային ամրությունների ու ամրոցների կլոր աշտարակներն ու պարիսպները, մեր կարծիքով, կապված են Սիրիայի ամրոցաշինական կառույցների հետ⁵³: Ինքնին հասկանալի է, որ այդ ամրոցները, որոնք հաճախ բազմահարկ զորանոցի բնույթ ունեն, այլ սոցիալ-պատմական

53 է. Ֆ. էդերբրգ, «Տալլին», Մոսկվա, 1946, էջ 3, 8—9, նկար 3—6 (ռուսերեն):—Վ. Վ. Կոստոշկին, «Նարվա», Մոսկվա, 1948, էջ 8—9, նկար 1—3 (ռուսերեն):—Ա. Մ. Կրուսին, «Ռիգա», Մոսկվա, 1947 (ռուսերեն):

դեր են կատարել, քան Կիլիկիայի պաշտպանական կառույցները:

Կիլիկիայի հայկական ամրոցները, որոնք որոշ ազդեցություն են գործել Արևելքի ամրոցաշինության զարգացման վրա, իսկ նրա միջոցով էլ՝ ԺԲ—ԺԳ դարերին Արևմտյան Եվրոպայի վրա, պատմական մեծ արժեք ունեն: Այդ կառույցների մենագրական հետազոտությունը և բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ավելի լրիվ լուսաբանելու նրանց դերը միջնադարյան ամրոցաշինության զարգացման պատմության մեջ:

